

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի սեպտեմբերի 8-11-ը Սերբիայի Հանրապետություն /Բելգրադ/
կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սերբիայի Հանրապետություն (Բելգրադ), 2025թ. սեպտեմբերի 8-11-ը

3. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (UNECE), Սերբիայի վիճակագրական գրասենյակ

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցել «UNECE Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացում» խորագրով աշխատաժողովին:

Աշխատաժողովը հիմնված էր Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (CES) կողմից հաստատված ուղեցույցների՝ «Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենք» (GLOS) (2016թ.) և «Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման ուղեցույց» (2019թ.) վրա:

Աշխատաժողովի նպատակներն էին.

- Տրամադրել հարթակ ազգային և միջազգային փորձագետների համար՝ պաշտոնական վիճակագրության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մոդեռնիզացման լավագույն փորձի փոխանակման և ազգային վիճակագրական համակարգերի համար իրավական մարտահրավերներ առաջացնող խնդիրների համար:

- Քննարկել GLOS-ն արդիականացնելու և վիճակագրական օրենսդրությունն ամրապնդելու և ներդնելու համար հետագա գործնական ուղեցույց պատրաստելու անհրաժեշտությունը:

Աշխատաժողովը կազմակերպվել էր UNECE-ի վիճակագրական օրենսդրության ղեկավար խմբի կողմից, որը ներառում է Ալբանիան, Հայաստանը, Հունաստանը, Իռլանդիան, Լատվիան, Նորվեգիան, Լեհաստանը, Իսպանիան, Միացյալ

Թագավորությունը, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիան (EFTA), Եվրամիության վիճակագրական ծառայությունը (Եվրոստատ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD), Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրության բաժինը (UNSD) և UNECE-ն, հյուրնկալվելով Սերբիայի վիճակագրական գրասենյակի կողմից:

Հանդիպման թիրախային լսարանը ազգային վիճակագրական գրասենյակների և միջազգային կազմակերպությունների փորձագետներն էին, որոնք հետաքրքրված են պաշտոնական վիճակագրության իրավական շրջանակի և տվյալների հասանելիության, կառավարման իրավական ասպեկտների ամրապնդմամբ:

5. Քննարկված թեմաները՝

Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքի մեկ տասնամյակը, առավելությունների և մարտահրավերների հետ կապված փորձը, ինչպես նաև բարելավման գաղափարները, ապագա GLOS-ի կառուցվածքը, պաշտոնական վիճակագրության մեջ արհեստական բանականության վերաբերյալ վիճակագրական օրենսդրության ուղեցույցը, տվյալների համար արհեստական բանականության մարտահրավերները, էթիկական նկատառումները և հնարավորությունները, սոցիալական հետազոտությունների և բիզնես վիճակագրության իրավական հարցերը, գլոբալ տվյալների փոխանակումը և ինտեգրումը, այլ համայնքներից սովորելը, գլոբալացման մարտահրավերները, տվյալների փոխանակումը հետազոտությունների համար, մասնավոր տվյալներին հասանելիությունը, գլոբալ տվյալների կառավարումը և տվյալների էկոհամակարգերի իրավական հարցերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը աշխատաժողովին որպես պանելիստ մասնակցել է ազգային և գլոբալ տվյալների կառավարման նախաձեռնությունների կապակցման և աջակցող վիճակագրական օրենսդրության ապահովման վերաբերյալ պանելային քննարկմանը, ինչպես նաև ներկայացրել է «Գլոբալացման մարտահրավերները, որոնց բախվում են ազգային վիճակագրական գրասենյակները» խորագրով շնորհանդեսը:

Հայաստանը՝ ի դեմս Արմատատի նախագահի Ս. Մնացականյանի և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ - վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Սաֆյանի, մասնակցել է «Պաշտոնական վիճակագրության

մասին մոդելային օրենք»-ի մշակման աշխատանքներին և հանդիսանում է UNECE-ի վիճակագրական օրենսդրության ղեկավար խմբի անդամ:

Նմանատիպ աշխատաժողով «Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենք»-ի վերաբերյալ կազմակերպվել էր 2023թ. հուլիսի 4-5-ը Երևանում՝ EFTA-ի և UNECE-ի կողմից համատեղ՝ Արմատատի հետ սերտ համագործակցությամբ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման գործընթացների կառավարման և իրավական շրջանակի բարելավումը հիմնարար նշանակություն ունի բարձ որակի վիճակագրություն արտադրելու համար և առաջնահերթություն է շատ երկրների համար: Աշխատաժողովը համաձայնեց, որ փոփոխվող տվյալների լանդշաֆտի, տվյալների այլ արտադրողների և տվյալների նոր աղբյուրների ի հայտ գալու և գեներատիվ արհեստական բանականության գործիքակազմի կիրառելիության ընդլայնման համատեքստում անհրաժեշտ է ճկուն և հեռանկարային իրավական հիմք՝ աջակցելու և հնարավորություն տալու ազգային վիճակագրական համակարգերին համապատասխանելու նպատակներին և շրջակա միջավայրին:

CES-ն աջակցել է իր անդամներին այս ոլորտում՝ EFTA-ի և Եվրոստատի հետ համատեղ մշակելով և հաստատելով «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքը (2016թ.) և վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման ուղեցույցը (2019թ.): Համապատասխանեցվելով ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին՝ փաստաթղթերը տրամադրում են ուղեցույց վիճակագրական օրենսդրության մշակման վերաբերյալ, որն անհրաժեշտ է վիճակագրական համակարգերի մոդեռնիզացմանն աջակցելու և պաշտոնական վիճակագրության ամբողջական արժեքը բացահայտելու համար:


Աշխատաժողովին պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել իրավական և կառավարման փորձագետների կանոնավոր հանդիպումներ՝ շարունակելու աշխատանքն այս թեմայի շուրջ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը աշխատաժողովին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին քննարկելու վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման խնդիրները և մարտահրավերները, կիսելու պաշտոնական վիճակագրության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մոդեռնիզացման լավագույն փորձը և իրենց ներդրումն ունենալ GLOS-ի մոդեռնիզացման գործընթացում:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ



Ստեփան Մնացականյան

16. 03. 25.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - **ՀՀ վիճակագրական կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - **ՀՀ Վարչապետի 25.08.2025 թվականի N 740-Ա որոշում**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը- **Սերբիայի Հանրապետություն (ք. Բելգրադ)**

5. Գործուղման ժամկետները՝ **2025թ. սեպտեմբերի 8-11-ը**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

- 1) իրավորող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- **ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով**

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

- 2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)


(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

- ☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
- ☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն՝

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհաձախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար



Ա. Հայրապետյան

16.09.25թ.